

Հայաստանի կառավարությունը իր 4 Յունիսի միտինգը ընթացքին վաերացուց այլ երկիրներու քաղաքացիներու Հայաստանի քաղաքացիութեան անձնագրեր տրամադրելու վերաբերեալ: Յայտարարուեցաւ, որ 2026-ի առաջին եռամսեակին արտերկրի մէջ տրամադրուած է Հայաստանի քաղաքացիութեան վաերական 334 անձնագրեր:

## ՎԵՐՋԻՆ ԱՌԻԹԻ ԸԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

Ուաշինգթոնի մէջ Յունիսի առաջին օրերուն կազմակերպուած լիբանանեան-իսրայէլեան բանակցային նիստերը նախանցեալ օր արդիւնաւորուեցան շարք մը պոզիտիւ կէտեր պարունակող զինադադարի նոր համաձայնութեամբ մը: Ամերիկեան-լիբանանեան-իսրայէլեան եռակողմանի յայտարարութիւնը նշեց, թէ որոշուած է դադրեցնել ռազմական գործողութիւնները, պայմանաւ որ Հրճպալլա դատարկէ հարաւը եւ ուղղուի Լիթանի գետէն հիւսիս: Կողմերը համաձայնուեցան յառաջիկային շարունակել բանակցութիւնները, շեշտելով թէ որեւէ լուծում պէտք է ուղղակիօրէն:

ճակումի ենթարկուին իսրայէլեան բնակավայրերը: Իսրայէլեան բանակը մինչ այդ շարունակեց ռազմական գործողութիւնները եւ քաղաքացիներուն կոչ ուղղեց հարաւ չվերադառնալու, որովհետեւ ան տակաւին ռազմական գոտի է: Իսրայէլեան բանակին համաձայն, անցնող շաբթուան ընթացքին Լիթանի մէջ ռմբակոծուած է Հրճպալլայի 650 թիրախ, իսկ Առողջապահութեան նախարարութիւնը յայտնեց, որ 2 Մարտէն ի վեր Լիթանի մէջ մահացած է 3558 հոգի, վիրաւորուած՝ 10.870 մարդ: Նախանցեալ օր, Մարտայանի իրենց դիրքերուն մէջ գոհուեցաւ նաեւ ԵՌՆԻՖԻԼ-ի սերպ խաղաղապահ մը, վիրաւորուեցան սպանացի երկու զինուորներ: ԵՌՆԻՖԻԼ բացաւ հետաքննութիւն՝ պարզելու համար վտանգաւոր միջադէպին մանրամասնութիւնները:



Կնքուի երկու կառավարութիւններուն միջեւ՝ ամերիկեան հովանաւորութեամբ: Որոշուած է նաեւ հարաւի մէջ հաստատել փորձառական շրջաններ, ուր լիբանանեան բանակը կը ստանձնէ ապահովական պատասխանատուութիւն՝ հեռացնելով բոլոր ապօրինի զինեալները: «Լիթանի եւ Իսրայէլ կը շեշտեն, որ թշնամական միտումներ չունին իրար նկատմամբ եւ յանձնառու կը մնան բանակցային ուղեգիծին՝ յանգելու համար ամբողջական համաձայնութեան», նշուեցաւ հաղորդագրութեան մէջ: Սակայն, զինադադարը գործադրելու համար անհրաժեշտ է նախ յայտարարութիւնը պաշտօնապէս վաերացնել երկու մայրաքաղաքներուն մէջ ու տալ համապատասխան երաշխիքները: Յայտարարութեան կարճ ժամանակ ետք, լիբանանեան բանակէն ուժեր սկսան տեղակայուիլ Մարտայանի մերձակայ Տպպին գիւղին մէջ եւ բանալ այդ շրջանը լիբանանեան մնացեալ շրջաններուն կապող ճամբան, որ փակուած էր իսրայէլացիներուն կողմէ: Հրճպալլայի ընդհանուր քարտուղար Շէյխ Նայիմ Զասէմ եւ Հրճպալլայի հովանաւորութեամբ գործող կրօնական գործիչներ ընկալուեցին զինադադարի համաձայնութիւնը, զայն համարելով «լիբանանցիներուն մէջ մասը ընաչնչելու ծրագիր»: Զասէմ մերժեց զինադադարին համաձայնի, մինչեւ այն ատեն որ տակաւին կը ռմբակոծուին հարաւի գիւղերը: Զասէմի յայտարարութեան լոյսին տակ, Իսրայէլի վարչապետ Պենիաֆին Նեթանիահու մերժեց զինադադարի նիւթը ընկալելու կառավարութեան մէջ եւ անոր հաւանութիւն տալ, իսկ պաշտպանութեան նախարար Իսրայէլ Բազ սպառնաց հարուածել Պէյրութը, եթէ հրթիռար-

### ԱՌՆ. «ՆԱՅԻՍ ԸԱՍԵՍ ԳԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵՐ ԼԻԲԱՆԱՆՑԻՆԵՐԸ»

Հանրապետութեան նախագահ ժողէֆ Աուն շեշտեց, որ «ուաշինգթոնեան զինադադարը վերջին առիթն է, այլապէս թող իւրաքանչիւր խմբաւորում կրէ իր արարքներուն պատասխանատուութիւնը»: Ֆրանսացի պատուիրակ ժան



Իվ Լը Տրիանը ընդունած ատեն Աուն կոչ ուղղեց Իսրայէլին չտալու թռակաւեալ հողերէն չջաշուելու պատրուակներ: Նախագահը բուռն յարձակում գործեց թեհրակի դէմ ու զայն ամբաստանեց ամերիկացիներուն հետ բանակցութեան ընթացքին Լիթանի իր սեփական շահերուն համար որպէս ճշունի միջոց գործածելու մէջ, աւելցնելով որ «Հրճպալլայի ընդհանուր քարտուղար Շէյխ Նայիմ Զասէմ չի ներկայացնել լիբանանցիները»:

Վարչապետ Նաուաֆ Սալամ իր կարգին շեշտեց, որ բանակցութիւնը լուծումի յանգելու ամենէն արագ միջոցն է: Ան Իրանին կոչ ուղղեց խնայելու հարաւը եւ հրաժարելու լիբանանցիները որպէս բանակցային խաղաքարտ համարող քաղաքականութեան: Իսկ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի բանակի հրամանատարը ընդունած ատեն նշեց, որ զինադադարի համաձայնութիւնը պոզիտիւ է, որովհետեւ ռազմական գործողութիւնները չի դադրեցնել առանց նախապայմաններու:

## ՄԴՎԿ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆԸ Կ'ԱՅՅԵԼԷ ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌԻՆ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Լիթանի շրջանի Վարիչ մարմինը ներկայացնող պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ ատենապետ ընկ. Վահակ Տագսեանի եւ ընկերակցութեամբ ՄԴՎԿ Կերոնական վարչութեան անդամ ընկ. Ալեքսան Բեռլեանի, Հինգաբաթի, 4 Յունիս 2026-ի երեկոյեան, Անթիլիասի Մայրավանքին մէջ այցելեց Մեծի Տանն Կիլիկիոյ ՆՍՕՏՏ Կրամ Ա. կաթողիկոսին:



Տեսակցութիւնը առիթ հանդիսացաւ ընկալելու Լիթանի ներկայ քաղաքական, ապահովական, տնտեսական եւ ընկերային կացութիւնը, ինչպէս նաեւ երկիրը յուզող վերջին զարգացումները: Չրուցակիցները մտահոգութիւն յայտնեցին Լիթանի դիմագրաւած բազմաթիւ մարտահրաւերներուն առջնութեամբ եւ շեշտեցին ազգային համերաշխութեան, երկխօսութեան ու պետական հաստատութիւններու ամրապնդման անհրաժեշտութիւնը:

Անդրադարձ եղաւ նաեւ Միջին Արեւելքի ընդհանուր իրավիճակին, շրջանային լարուածութիւններուն եւ անոնց ազդեցութեան՝ Լիթանի, Հայաստանի եւ սփիւռքահայ գաղութներուն վրայ: Զննարկուեցան Հայաստանի առջեւ ծառայած քաղաքական եւ ազգային մարտահրաւերները, ինչպէս նաեւ Հայրենիք-Սփիւռք գործակցութեան ամրապնդման ուղիները:

Վեհափառ հայրապետը յատուկ կերպով անդրադարձաւ վերջերս Վատիկան կատարած իր այցելութեան եւ ունեցած միջազգային մակարդակի տեսակցութիւններուն, որոնց ընթացքին անդրադարձած է Արցախին եւ տարածաշրջանային խաղաղութեան նիւթին վերաբերող հարցերու:

Այս մտերմիկ խորհրդակցութեան ընթացքին գրուցակիցները վերահաստատեցին հետեւողական համագործակցութեան իրենց պատրաստակամութիւնը ի սպաս հայ ժողովուրդի ազգային շահերուն եւ Լիթանի կայունութեան ու բարգաւաճման:

## ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայաստանի մէջ վաղը տեղի պիտի ունենան խորհրդարանական ճակատագրական ընտրութիւններ, որոնք վճռորոշ պիտի ըլլան յառաջիկայ տարիներուն ներքին ու արտաքին ուղղութիւններուն առումով՝ մասնաւոր թաղաքական, ապահովական եւ ընկերատնտեսական ոլորտներուն մէջ: Ընտրապայքարին կը մասնակցի 16 կուսակցութիւն եւ երկու դաշինք: Խորհրդարանին արժանները կը բաժնուին քուէներուն առնուազն 4 առ հարիւրը յաղթա-



հարած կուսակցութիւններուն եւ առնուազն 8 առ հարիւրը հատած դաշինքներուն միջեւ: Կառավարութիւն պէտք է ձեւաւորուի ընտրութեան առաւելագոյնը 6 օր ետք, այլապէս ընտրական երկրորդ փուլ կը կազմակերպուի առաջին երկու դիրքերը գրաւող ուժերուն միջեւ: Ազգային ժողովին մէջ առնուազն 4 պառտ յատկացուած է ազգային փոքրամասնութիւններու ներկայացուցիչներուն: Ընտրութիւնները դիտարկելու համար Հայաստան ժամանած են եւրոպական, ռուսական եւ այլ դիտորդական պատուիրակութիւններ:

### ԲՈՒՆ ԸՄՐՈՉԱՐԵԱՒ

Այսօր ընտրական լուրջութեան օրն է, որուն անցնող օրերուն նախորդեցին ընտրական քարոզչութեան բուռն ելոյթներ, բանավեճեր եւ նոյնիսկ սպառնալիքներ: Թեկնածուները առաւելաբար կեդրոնացան հայ-արաբլեզնական կարգացումներուն եւ Հայաստանի արտաքին յարաբերութիւններուն վրայ: Մինչ իշխող կուսակցութիւնը թուեց

քաղաքական եւ տնտեսական իրագործումները, շեշտելով անկախութիւնն ու խաղաղութիւնը ամրապնդելու կարեւորութիւնը, ընդդիմութիւնը վարչապետն ու կառավարութիւնը համարեց դաւաճաններ՝ Թուրքիոյ եւ Ատրպէյճանի գործակալներ, ահազանգելով զալիք աղէտէն, եթէ Փաշինեան վերընտրուի: Անոնք նաեւ դատապարտեցին կառավարութեան արեւմտամետ ուղղուածութիւնը եւ Մոսկուայէն հեռանալու փորձերը: Վարչապետ Նիկոլ Փաշինեան անդրադարձաւ Դարաբաղեան հակամարտութեան օրերուն ստեղծուած տիրահոշակ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակին եւ կարծիք յայտնեց, թէ այդ խմբակը կազմուած էր, որպէսզի հակամարտութիւնը չլուծուի: Զբացառելով Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան ղեկը գալու հաւանականութիւնը, ան միաժամանակ դիտել տուաւ, որ երեւան չի պատրաստուիր հանրաքուէ կազմակերպելու Եւրոմիութեան միանալու մասին, սակայն պիտի աշխատի մուտքի արտօնագրերու դրութիւնը ազատակալանցնել մինչեւ 2031 թուական: «Հայաստան» դաշինքի ղեկավար Ռոպերթ Զոհարեան ահազանգեց, թէ կազմակերպութեան վարչապետութիւնը, որովհետեւ Ռուսիա պիտի բարձրացնէ վառելանիւթի յատուկ սակագիները: Ընտրութեան երկու օր առաջ կալանավայրէն արձակուեցաւ եւ տնային կալանքի տակ տեղադրուեցաւ Բագրատ արք. Գալստանեանը, որ ամիսներ առաջ առաջնորդած էր ընդդիմադիր շարժում մը:

### ԿԵՐՏԵԼ ԻՆՔՆԻԾԻԱՆ, ԱՆՎՏԱՆԳ ԵՒ ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Հայաստանի Վարիչ մարմինը հաղորդագրութեամբ մը քաղաքացիներուն կոչ ուղղեց աշխուժօրէն մասնակցելու ընտրութիւններուն՝ կերտելու համար Հայաստանի ինքնիշխան, բարգաւաճող եւ անվտանգ ապագան: «Այս ընտրութեամբ մենք պիտի որոշենք, թէ ինչ ուղիով պիտի շարունակէ զարգանալ Հայաստանը՝ ինքնիշխանութեան եւ պետականութեան ամրապնդումի», թէ՞ մէկ այլ պետութեան

## ՉԱՅՆԵՐ ԳՈՒԷՅԹԻՆ (Կալութային արձագանգ)



Մեր այս սիւնակին մէջ առաջին անգամ է որ արձագանգներ կը բերենք Զուլեյթէն, որ Արաբական Ծոցի շրջանի հնագոյն ու ամենէն աշխույժ հայազաղութը կը սեպուի: Աշխույժ, որովհետեւ Զուլեյթի մէջ կը գտնուի շրջանին հայկական ամենօրեայ միակ վարժարանը՝ Ազգ. Ծնմարանը, ահա արդէն շուրջ 65 տարիէ ի վեր:

Ազգ. Ծնմարանի գոյութիւնը օրինութիւն մըն է քուէ-թախայոց համար: Դպրոցը, սկսելով մանկապարտէզէն ու նախակրթարանէն, հետզհետէ յաջողած է վերածուիլ երկրորդական վարժարանի, 1980-ին տալով պաքաւորիայի իր առաջին հունձքը:

Ե՛ր երբեմն, այս ճնմարանի աշակերտութեան թիւը եւս... ինչպէս Հայկաի մեր դպրոցներունը... կը հասնէր մինչեւ 800-ի...: Դարագան նոյնը չէ հիմա: Ծոցի մերթը ընդ մերթ բռնկող պատերազմները արտագաղթի մղած են (ու կը մղեն) տեղւոյն ընտանիքներէն շատեր, որոնք առաւելաբար Սուրիայէն ու Լիթանիէն եկած ու հաստատուած էին հոս, տնտեսական դրոյապատճառներով: Ընդ տասնամեակ մը առաջ, 2015-16 ուսումնական տարեշրջանին, Զուլեյթի Ծնմարանի աշակերտութեան թիւը 400 էր: 2022-ին այդ թիւը իջած էր 340-ի: Իսկ ընթացիկ տարեշրջանը (2025-26) փակուած է 298 աշակերտներով, որոնց 15 տոկոսն ալ ոչ-հայեր են...:

(Շարունակութիւնը տեսնել էջ 2)


Շարունակութիւնը տեսնել էջ 2

# ԱՆԵՔՍԱՆԻ ԹՈՓՃԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՎԱԻԵՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ (ՄԱՍ Ա.)

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԻՍԿԱՐԱՏԵԱՆ

Յեղիակաւոր պատմաբաններու հաստատմամբ գեղարուեստականացած կամ գրականացուած Յայոց ցեղասպանութեան յուշագրութիւնները նոյնպէս վաւերագրական են, ինչպէս յուշագրութիւնը ինքնին:

Յայոց Մեծ Եղեռնի նահատակ ու մեծ բանաստեղծ Ռուբեն Սեւակ Ալեքսանդր Թօփճեանի «Եւ անգամ մահից յետոյ» (Յայաստանի Գորղնէրի միութեան հրատ., Երեւան, 2005, մեծ չափի 591 էջ) վէպին գլխաւոր հերոսն է: Յեղիակը մանրամասնութիւններով կը նկարագրէ Ռուբեն Սեւակի մանկութիւնը, պատանեկութիւնն ու երիտասարդութիւնը: Ան գեղարուեստական ոճով կ'անդրադառնայ անոր մտա-



ւորականի ձեւաւորման, նահատակութեան, ինչպէս նաեւ անոր սիրելիին եւ ապա կնոջ՝ Եւանի մասին: Գիրքին սկիզբը հրատարակչութեան ամփոփ ծանօթագրութեան մէջ կ'ընտրուի. «Ռուբեն Սեւակի համար իր ասպետական հաւատարմութիւնը վստահ իտեալներին վեր է ամէն ինչից եւ անգամ սեփական կեանքից, ահա թէ ինչո՞ւ նա կտրակաւ նայէ հրաժարուելով թուրքերի առաջարկած ստորագրուիչ առեւտրից (մահմետականութիւն ընդունելու գնով փրկել սեփական կեանքը) խիզախ ու աներեր է մտում մահուան սպառնալիքին դէմ յանդիման» (էջ 2):

Կ. Պոլսոյ Սիլիվրի թաղամասի երկաթագործ Յովհաննէս Զիլիկիրեանի որդին՝ Ռուբեն (Սեւակ), որ մտադրած է թշուկութիւն ուսանիլ, շոգեխառով դէպի Չուիցերիոյ Լօզան բաղաձը կը ճամբորդէ: Ծամբուն վրայ կը ծանօթանայ թուրք երեւելի փաշայի մը որդւոյն՝ Զեւանին, ինչպէս նաեւ գուցեւերիացի կոմսուիի Ալիսին: Խօսակցութեան ընթացքին Զեւան Ռուբենին կ'ըսէ, թէ օսմանցիք երկուանը չեն այլեւս: Անոնք փոխուած են, շա՛տ փոխուած են...:

Լօզանի մէջ Ռուբեն Զիլիկիրեան համալսարան կը յաճախէ: Իր դասախօսներէն ամենէն անելի մօտ կ'ըլլայ դոկտ. Ռուի հետ, յաճախ երեկոները միասին արքայապետի հիւանդանոցի կ'այցելեն: Այլ հայ ուսանողներու կը ծանօթանայ եւ իր նախագահութեամբ կը հիմնուի Արմենիա միութիւնը, որ յատկապէս կարիքաւոր ուսանողներու կ'օգնէ: Ռուբեն Զեւանէն կ'իմանայ որ անոր փաշա հայրը ձեռքաւարուած է Պոլսոյ մէջ ու քսուողուած: Անելի ուշ կ'իմանայ անոր խեղդուիլը Գոնիայի բանտին մէջ: Պոլսոյ արուարձան Սիլիվրիի իր ազգականներէն բացի, ան «Լոյս», «Արեւելեան Մամուլ» եւ «Մասիս» թերթերու խմբագրութիւններէն նամակներ կը ստանար եւ իր թղթակցեր անոնց:

Ռուբեն Սեւակ դոկտ. Ռուի հետ տեսած էր Չուիցերիոյ մշայ կողմերը՝ թշուառութիւն, անարդարութիւն եւ մարդկային էութեան քստմելի դրսեւորումներ: Սակայն կոմսուիիին բնակարանը ակամայ լսած հարցերը բոլորովին ուրիշ բան կ'ըսէին:

Թիֆլիսահայ ուսուցչուհիի մը նամակէն Ռուբեն Սեւակ կ'իմանայ, որ բանաստեղծ Սիամանթօ Չուիցերիոյ Լէյզլէն գիւղի թղթախտանոցներէն մէկուն մէջ կը գտնուի: Ան Լէյզլէն մեկնելով Սիամանթոյին կ'այցելէ, որուն հետ կը գրուցեն գրական եւ ազգային նիւթերու շուրջ: Յամալսարանին մէջ եւ շրջապատը կեանքը կը շարունակուի ուրախ եւ տխուր կողմերով, ուր Ռուբեն Սեւակ 17-ամեայ գերմանուհի Եւանիին կը սիրահարի:

Մինչ այդ երիտուրբերը բուն գործունէութիւն ծաւալած էին Չուիցերիոյ ուսանող թղթախտանակներուն մէջ: Առանձնայատուկ նախաձեռնութեամբ անոնք կը հետապնդէին երիտասարդները եւ ուսանողները, անոնց խօսելով սուլթան Ապտիլ Յամիտի բռնակալութեան դէմ: Յրապարակի վրայ շատ գրոյցներ կը շրջէին Օսմանեան Պետութեան ներքին վիճակին շուրջ: Թրքահպատակ հայ ուսանողները՝ գրեթէ բոլորը չէզոք, սպասողական դիրք բռնած էին եւ կը փորձէին ամէն ձեւով հեռու մնալ այդ գրոյցներէն: Միւս կողմէ, Փարիզի մէջ երիտթուրքերու ղեկավարները բաւական կը մշակէին Զեւանը՝ սուլթանին հանդէպ անոր անձնական վրէժը նկատի ունենալով:

Ռուբեն Սեւակ արձակուրդին կը վերադառնայ Պոլիս, որ երիտթուրքերու յեղաշրջման օրերուն կը զուգարիպի: Չքնաղ գաղափարներով նշանախօսքեր եւ խոստումներ կը լսէ ան յեղափոխական թուրք գիտնորներէն: Բռնատիրութիւնը վերջ կը գտնէր...:

Պոլիս իր ընկերներուն հետ կը գործակցի թատերական ասպարեզին մէջ: Ռազմական նախարարութենէն ծանուցում կը հրապարակուի գիտնորագրուելու: Ռուբենի հայրը նախապէս 45 ոսկի պետել (գիտնորական ծառայութեան փոխարէն տուրք) վճարելով ազատած էր: Յիմա ալ նոյն բանը կրնար ընել իր տղուն համար, սակայն դժուարութիւններ կային: Ռուբեն իր բարեկամ Զեւանի հետ կը ներկայանայ գնդապետին եւ հարցը կը լուծուի 60 ոսկի վճարելով:

Զեւանն ու գնդապետը իթթիհատական էին եւ նախապէս ալ գիրար կը ճանչնային: Ռուբեն Սեւակ Լօզան կը վերադառնայ, ուրկէ Եւանիին հետ կը նամակակցի: Ան տեղական թերթի մէջ կը նշմարէ Ատանա, Տարսուս, Տէորթ Եոլ եւ ուրիշ ծանօթ անուններ ու 20.000-25.000 թիւերը: Կը պարզուի թէ 1909-ին Կիլիկիոյ մէջ հայոց շարդեր տեղի ունեցած էին:

## ԶԱՅՆԵՐ ԲՈՒՒՅԹԷՆ

(Շարունակուած էջ 1-էն)

2016-Էն ի վեր կրթօճախին տնօրէնն է տոքթ. Ներսէ Սարգիսեան (Յալեպէն): Վարժարանին յիսնամեակի յուշամատենը հրատարակուած էր 2011-ին, հալեպահայ կրթական մշակ (արդէն անելի քան տասնամեակէ մը ի վեր Երեւան հաստատուած) Յակոբ Չոլաքեանի հեղինակութեամբ: Դպրոցին նիւթական բեռը ամբողջովին կը հոգայ տեղւոյն գաղութը:

Զուլթի հայ գաղութին պատմութիւնը հին չէ. կը սկսի 1950-ականներէն: Գործի ու շահաբեր աշխատանքի հետամուտ սուրիահայ, լիբանանահայ, իրաքահայ եւ իրանահայ 300-400 երիտասարդներ կը կազմեն գաղութին առաջին կորիզը:

1960-Էն սկսեալ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, ընդառաջելով իրեն հասած դիմումներուն, «Յոգեւոր հովուութեան շրջան»-ի կը վերածէ Զուլթը, տարիներ ետք ալ անոր կու տայ թեմական առանձին կառոյց:

Յոս կը գործէ մէկ եկեղեցի: Տեղւոյն առաջնորդը իրեն օժանդակ ունի միակ քահանայ մը: Եկեղեցին ու դպրոցը առանցքը կը կազմեն գաղութին:

Ստորեւ՝ անցնող շաբաթներու թուլթթայի ազգային կեանքէն քաղուած լուրերու փունջ մը:

**ԶՈՒՅՅՈՒ ԵՒ ԸՐԶԱՎԱՅՑԻ ԴՅՈՑ ԹԵՍԸ**, 17 Ապրիլին, ազգ. առաջնորդարանի դահլիճին մէջ գումարած է իր երեսփոխանական ժողովին լիազումար մէկ նիստը, ընկերու համար գաղութին առնչուող այլաբնոյթ հարցեր: Նիստին նախագահած է Արտակ ա. քնյ. Զեհեայեան:



Կարդացուած են ազգային վարչութեան եւ Ազգ. ճեմարանի հոգաբարձութեան նիւթաբարոյական գոյգ տեղեկագրերը, որոնց մասին, այնուհետեւ, արտայայտուած են կարծիքներ: Լիազումար նիստին վերաբերեալ հրատարակուած պաշտօնական լրատուութիւնը կ'ըսէ, թէ «**ազգային երեսփոխանական ժողովը բարձր գնահատեց գործունէութիւնը ազգ. վարչութեան եւ Զուլթի ազգային վարժարանին, որոնք, հակառակ բոլոր մարտահրաւերներուն, յամառօրէն կը շարունակեն իրենց առաջելութիւնը:**»

**ԶՈՒՅՅՈՒ** հայրութիւնը, Ապրիլ 24-ին, Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ մէջ մատուցուած պատարագի աւարտին՝ «Ներսէ Շտորիայի» սրահը սարքուած յուշահանդէտով մը ոգեկոչած է Յայոց ցեղասպանութեան զոհերուն յիշատա-



կը, Մեծ Ոճիւրի 111-ամեակին առիթով: Զեւանարը կազմակերպուած է թեմին ազգ. վարչութեան կողմէ: Բացման խօսք արտասանած է Յովհաննէս Գեղարուեստական կարծ յայտագրէ մը ետք (ուր տեղ գտած է Պարոյր Սեւակի «Զիչ ենք, բայց հայ ենք» քերթուածը), բանախօսած է Արամ Զափարեան: Անոր յաջորդած է Յայաստանի դեսպան դոկտ. Արսէ Առաքելեանի խօսքը: Յուսկ բանքը արտասանած է տեղւոյն հովիւը՝ Արտակ ա. քնյ. Զեհեայեան:

**ԶՈՒՅՅՈՒ** կրթութեան նախարար Ըլալ ալ-Թապաթապ, 13 Մայիսին, իր պաշտօնատեղիին մէջ ընդունած է Յայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան դոկտ. Արսէ Առաքելեանը, որուն ընկերակցած է Ազգ. ճեմարանի տնօրէն տոքթ. Ներսէ Սարգիսեան: Դեսպանը բերանացի ամփոփ գեկոյց մը տուած է կրթական ոլորտէն ներս Յայաստանի ձեռքբերումներուն, ինչպէս նաեւ դեսպանատան ջանքերուն մասին՝ ինչ կը վերաբերի երկկողմ յարաբերութիւններուն: Նախարար ալ-Թապաթապ, իր կարգին, գնահատանքով արտայայտուած է



Զուլթի հայ համայնքին մասին, վերահաստատելով իր կառավարութեան պատրաստակամութիւնը՝ աջակցելու Զուլթի հոգին վրայ գործող միակ հայկական վարժարանին: Յայաստան-Զուլթի միջկառավարական յանձնաժողովի յառաջիկայ նիստին ընդառաջ՝ կողմերը համաձայնած են նոր առաջարկներու ճամբով աշխուժացնել միջնակարգ եւ մասնագիտական կրթութեան մարգէն ներս գործակցութիւնը:

**ԶՈՒՅՅՈՒ** մէջ Յայաստանի դեսպանը՝ դոկտ. Արսէ Առաքելեան, որ միաժամանակ իր երկիրը կը ներկայացնէ Յորդանանի մէջ, 18 Մայիսին մայրաքաղաք Ամմանի մէջ իր հաւատարմագրերը ներկայացուցած է Յորդանանի թագաւոր Ապտալա Բ.-ին: Յայ դեսպանին նստավայրը կը մնայ Զուլթը:



**ԶՈՒՅՅՈՒ ԵՒ ԸՐԶԱՎԱՅՑԻ ԴՅՈՑ ԹԵՍԸ** հաղորդագրութեամբ մը յայտնած է, թէ Վեհափառ Արամ Ա. Կաթողիկոսի տնօրինումով թեմին առաջնորդական նոր տեղապահ նշանակուած է **հոգ. Տ. Օշին վրդ. Չուլթթթանեան**: Ան ծնունդով Յալեպէն է, 30 տարեկան: Աւարտած է Պիքֆայի դպրեվանքը եւ կուսակրօն քահանայ ձեռնադրուած 2016-ին: Ցարդ թեմական պաշտօններ վարած չէ, այլ վանական տարաբնոյթ ծառայութիւններով գործած է Անթիլիասի մայրավանքէն ներս: Յայ տուրքը իր նոր պաշտօնատեղին ժամանած է 20 Մայիսին: Երկու օր ետք, ուրբաթօրեայ պատարագի աւարտին (Զուլթի մէջ Ս. Պատարագ կը մատուցուի Ուրբաթ օրերը, քանի որ Կիրակին աշխատանքային օր է), ընդունած է թեմի հաւատացեալներուն աջահամբոյրդ ու շնորհաւորութիւնները: Այնուհետեւ, ազգ. առաջնորդարանի դահլիճին մէջ, ազգային մարմինները ողջունած են իրենց նոր առաջնորդը: Այստեղ, բարիգալստեան խօսքեր արտասանած են Արտակ ա. քահանայ, ազգ. վարչութեան ատենապետ Նազարթէ Զեօշկերեան, Յայաստանի դեսպանը՝ Արսէ Առաքելեան եւ ազգային երեսփոխանական ժողովի ատենապետ Զեմի Սարգիսեան: Իսկ Ուրբաթ, 29 Մայիսին, Յ. Օշին մատուցած է իր անդրանիկ Ս. Պատարագը, որու ընթացքին կատարուած է հանրապետական մարդասեր:



**ԶՈՒՅՅՈՒ** Ազգ. ճեմարանի տնօրէնութիւնն ու պաշտօնութիւնը, 25 Մայիսին, վարժարանի երդիքին տակ մէկտեղուելով՝ ողջերթ մաղթած են փակուող տարեշրջանին հետ աշխատանքը դադրիլ փափաքող չորս կրթական մշակներու՝ պրն. Կարօ Աւանեանի (փոխտնօրէն), օրդ. Սարալ Յամփոյեանի (հայերէնաւանդ), օրդ. Մարինա Գալայճեանի (ուսողութիւն) եւ պրն. Խաճակ Պոյաճեանի (հայերէնաւանդ): Տնօրէն տոքթ. Ներսէ Սարգիսեան դրուատալից արտայայտութիւններով մեծարած է պաշտօնաթողները եւ յուշակուրդներ յանձնած անոնց: Չորս ուսուցիչներէն Կարօ Աւանեան (որ հեղինակն է 2019-ին Երեւան տպուած բանաստեղծական հատորի մը՝ «Եթէ...»), դիմատետրի իր էջին վրայ, այս առթիւ, գրած է. «**Վեանքիս մեծագոյն մասը անցուցած եմ դպրոցական պատերէն ներս՝ շրջապատուած աշակերտական աշխոյժ թոհուրով, դասագիրքերու բուրմունքով ու կրթական մշակներու անխոնջ նուիրումով: Ուսուցիչի կոչում...: Այս բառակապակցութիւնը երբեք սովորական չէ եղած ինձի համար. ան միշտ խորապէս յուզած է հոգիս, ստիպած է երկար խորհրդածել ու վերլուծել մեր առաքելութեան իսկական խորհուրդը: Այսօր, երբ կը դիտեմ արդի աշխարհի սրբութեան փոփոխութիւնները, կը գիտակցիմ, որ ուսուցիչ ըլլալը այլեւ միայն գիտելիք ջանքէ չէ: Նորագոյն մանկավարժութիւնը մեզմէ կը պահանջէ ըլլալ ճկուն, քայլ պահել արհեստագիտական թռիչքներուն հետ եւ դասարանը վերածել ստեղծագործական արուեստանոցի»:** Աւանեան այնուհետեւ նկատել կու տայ, որ ուսուցիչը մեծագոյն գոհունակութիւնը կը գգայ այն պահուն՝ երբ «**տարիներու դժուար աշխատանքէ ետք քու ցանած ստրկները կը տեսնես պտղաբերած, կամ երբ յաջողութեան հասած նախկին սան մը երախտագիտութեամբ կը սեղմէ ձեռքը**»...:



**ԶՈՒՅՅՈՒ** Ազգ. ճեմարանի տնօրէնութիւնն ու պաշտօնութիւնը, 25 Մայիսին, վարժարանի երդիքին տակ մէկտեղուելով՝ ողջերթ մաղթած են փակուող տարեշրջանին հետ աշխատանքը դադրիլ փափաքող չորս կրթական մշակներու՝ պրն. Կարօ Աւանեանի (փոխտնօրէն), օրդ. Սարալ Յամփոյեանի (հայերէնաւանդ), օրդ. Մարինա Գալայճեանի (ուսողութիւն) եւ պրն. Խաճակ Պոյաճեանի (հայերէնաւանդ): Տնօրէն տոքթ. Ներսէ Սարգիսեան դրուատալից արտայայտութիւններով մեծարած է պաշտօնաթողները եւ յուշակուրդներ յանձնած անոնց: Չորս ուսուցիչներէն Կարօ Աւանեան (որ հեղինակն է 2019-ին Երեւան տպուած բանաստեղծական հատորի մը՝ «Եթէ...»), դիմատետրի իր էջին վրայ, այս առթիւ, գրած է. «**Վեանքիս մեծագոյն մասը անցուցած եմ դպրոցական պատերէն ներս՝ շրջապատուած աշակերտական աշխոյժ թոհուրով, դասագիրքերու բուրմունքով ու կրթական մշակներու անխոնջ նուիրումով: Ուսուցիչի կոչում...: Այս բառակապակցութիւնը երբեք սովորական չէ եղած ինձի համար. ան միշտ խորապէս յուզած է հոգիս, ստիպած է երկար խորհրդածել ու վերլուծել մեր առաքելութեան իսկական խորհուրդը: Այսօր, երբ կը դիտեմ արդի աշխարհի սրբութեան փոփոխութիւնները, կը գիտակցիմ, որ ուսուցիչ ըլլալը այլեւ միայն գիտելիք ջանքէ չէ: Նորագոյն մանկավարժութիւնը մեզմէ կը պահանջէ ըլլալ ճկուն, քայլ պահել արհեստագիտական թռիչքներուն հետ եւ դասարանը վերածել ստեղծագործական արուեստանոցի»:** Աւանեան այնուհետեւ նկատել կու տայ, որ ուսուցիչը մեծագոյն գոհունակութիւնը կը գգայ այն պահուն՝ երբ «**տարիներու դժուար աշխատանքէ ետք քու ցանած ստրկները կը տեսնես պտղաբերած, կամ երբ յաջողութեան հասած նախկին սան մը երախտագիտութեամբ կը սեղմէ ձեռքը**»...:

L. Շ.

## ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Շարունակուած էջ 1-էն

կախուածութեան ուղիով, հարեաններու հետ խաղաղ համակցութեան եւ տնտեսական յառաջընթացի՞, թէ՛ յաներժ թշնամութեան եւ շրջափակումի, ժողովրդավարութեան եւ օրէնքի գերակայութեան, թէ՛ յետընթացի եւ քրեական համակարգի վերականգնումի ճամբով», հարց տուաւ հաղորդագրութիւնը, աջակցութիւն յայտնելով այն ուժերուն, որոնք ունին Յայաստանի վարչապետի յարակ տեսլականը, պետականամբողջ մտածողութիւն եւ յառաջընթացի իսկական ծրագիր:

### ԱՐՏԱՔԻՆ ՄԵԿԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Միացեալ Նահանգներու արտաքին գործերու նախարարութիւնը յայտարարեց, թէ Յայաստանի քաղաքական ապագան պտքոյ է որոշէն միայն Յայաստանի քաղաքացիները: Իսկ հայ ընտրողներու որոշումին վրայ ազդելու բացայայտ քայլով, ռուս պատասխանատուներ ընտրական քարոզարշափ վերջին օրերուն բազմացուցին Յայաստանի նկատմամբ ճնշումները: Փոխվարչապետ Ալեքսե Օվերչուք

յայտնեց, որ Երեւանի նկատմամբ իրենց դիրքորոշումները անելի պիտի յստականան ընտրութեան արդիւնքներուն հիման վրայ, իսկ Անվտանգութեան խորհուրդը շեշտեց, որ Յայաստան կազին համար պէտք է յաւելեալ մէկ միլիառ տոլար ճարէ: Յակագործելով Յայաստանի նկատմամբ ռուսական սպառնալիքներուն եւ պատժամիջոցներուն, Երեւանի մէջ Երուրդութեան դեսպան Վասիլիս Մարալոս խոստացաւ Յայաստանին յաւելեալ աջակցութիւն տրամադրել, տեսակցելէ ետք հայ արտահանողներու հետ, որոնք վերջերս սկսած են դիմագրաւել կարգ մը արտադրութիւններու Ռուսիա արտահանումը արգիլող Մոսկուայի որոշումները: Երուրդական յանձնաժողովի նախագահ Ուրսուլա Վոն Տէր Լայն, իր կարգին, գրուցեց վարչապետ Փաշինեանի հետ եւ յայտնեց Երեւանին յաւելեալ 50 միլիոն եւրօ տրամադրելու մասին:

«ՄԱՍԻՍ» - ՄԵՐ ԱՆԿԻՒՆ

ՅՈՒՆԻՍ 7-ԻՆ ԿԸ ՎՃՌՈՒԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԱԳԱՆ

Յունիս 7-ին Հայաստանի մեջ տեղի ունենալից խորհրդարանական ընտրություններու քարոզարշավը կը մտնայ իր աւարտին ու քանի մը օր ետք քաղաքացիները պիտի ուղղուին քուէատուփ՝ վճռելու համար իրենց երկրի ապագան առնուազն յառաջիկայ հինգ տարիներուն համար:

Վերջին օրերուն զգալիօրէն աւելցած է հետաքրքրութիւնը այս ընտրութիւններուն նկատմամբ, ոչ միայն Հայաստանէն ներս, այլեւ անկէ դուրս: Միջազգային լրատուամիջոցները մօտէն կը հետեւին կողակասեան փոքր հանրապետութեան շուրջ տեղի ունեցող ընտրական գարգացումներուն՝ գտնուելով յարապակիս յարաբերութեան մէջ իրար հետ:

Մտկուան ու Պրիքսէլը գիրար կը մեղադրեն Հայաստանի ներքին գործերուն խառնուելու եւ ընտրութիւններու արդիւնքներուն վրայ ազդելու փորձ կատարելու մէջ: Պաշտօնական երեւանը կը փորձէ շատ զգուշաւոր կերպով նաւարկել այս երկու կողմերուն միջեւ՝ Արեւմուտքէն եկող գորակցական յայտարարութիւններն ու քայլերը ընդունելով հանդերձ, հեռու կը մնայ Ռուսաստանի հետ բացայայտ ամճակատումէ, նոյնիսկ այն պարագային, երբ հոնկէ կը հնչեն ամենօրեայ զգուշացումներ ու սպառնալիքներ՝ Եւրոպական Միութեան հետ Հայաստանի վարած մերձեցման քաղաքականութեան նկատմամբ: Վերջին օրերուն այդ զգուշացումները արդէն իսկ վերածուած են գործնական քայլերու՝ արգիլելով հայաստանեան շարք մը արտադրութիւններու մուտքը ռուսաստանեան շուկայ: Իշխանութիւնները յոյս ունին, որ այդ պատժամիջոցները կը կրեն ժամանակաւոր բնոյթ եւ պիտի մեղմանան կամ ամբողջութեամբ վերանան ընտրութիւններէն ետք:

Երբքին ճակատի վրայ պայքարը կը մնայ սուր՝ իշխող «Քաղաքական Պայմանագիր» կուսակցութեան ու ռուսաստանահայ միլիառատեր Սամուէլ Կարապետեանի ստեղծած «Ուժեղ Հայաստանի» միջեւ: Երկու ուժերն ալ ինքնավստահութիւն կը յայտնեն, որ ընտրութիւններուն յաղթանակը պիտի ըլլայ իրենցը: Առաջինի պարագային այդ վստահութիւնը կու գայ վերջին հինգ տարիներուն անոր ունեցած

ձեռքբերումներէն, տնտեսական, ընկերային, արտաքին քաղաքականութեան ու բանակի արդիականացման եւ այլ բնագաւառներուն մէջ: Այդ նուաճումները, առաւել հանրային կարծիքի հարցախոյզերը մեծ տարբերութեամբ առաջատար դիրքի վրայ կը դնեն Նիկոլ Փաշինեանի գլխաւորած կուսակցութիւնը: Միւս կողմէ, Սամուէլ Կարապետեանի



գլխաւորած ուժը ժողովուրդին կու տայ խոստումներ, որոնք հասարակութեան կողմէ կ'ընկալուին ոչ-իրատեսական: Այս կուսակցութեան ստանալիք տոկոսները դժուար է կանխատեսել, նկատի ունենալով, որ հարցախոյզերու տուեալները խոստմալից չեն իրենց համար: Կը մնայ կաշառքի գործօնը, որ լայնօրէն կ'օգտագործուի այս ուժին կողմէ: Իրաւապահ մարմիններու հրապարակած ձայնագրութիւնները ու այդ առթիւ կատարուող ձեռնարկները ազդու պիտի ըլլան արդեօք կանխելու լայն ծաւալի ընտրախախտումները, կը մնայ հարցական:

Եթէ ամփոփելու ըլլանք քարոզարշաւի ամբողջ ընթացքը, կը նկատենք որ գլխաւոր դրական կողմը այն էր, որ ընտրութիւններուն մասնակից ուժերը կրցան ազատօրէն շփուիլ

ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ (ԱՄՏ)

Ընտրողներուն հետ: Բոլոր 18 կուսակցութիւններուն համար հասանելի էին հեռատեսիլային եթերաժամերը եւ ընկերային հարթակները՝ իրենց ծրագրերը ներկայացնելու համար հասարակութեան: Թէեւ քարոզարշաւի դաշտը հաւասար չէր բոլորին համար ու առաջատար դիրքերու վրայ մնացին աւելի մեծ նիւթական միջոցներու տիրապետող ուժերը: Միւս կողմէ, սակայն, պարզուեցան ժխտական բազմաթիւ երեւոյթներ: Կաշառքը, փոխադարձ սպառնալիքները, հայիոյախառն ելոյթներն ու զրպարտութիւնները եկան ստուերելու ժողովրդավարական ընտրութիւններուն ակնկալիքները:

Այժմ կը մնայ որ, Հայաստանը թեւակոխէ սոր փուլ, բոլոր կողմերը յարգեն ժողովուրդին մեծամասնութեան կամքը, փակեն պառակտուածութեան էջը, երկիրը հեռու մնայ անհարկի ցնցումներէ, որպէսզի կարենայ ընթանալ զարգացման ու բարգաւաճման ուղղութեամբ ու դառնայ ընդհանուր հայութեան երազած հայրենիքը:

ԽԱԶԲԱՌ-83

10x10 grid for crossword puzzle 83. The grid contains black squares indicating where letters should not be placed.

- ՀՐԶԱԳԻԾ ՀՐԶԱԶԳԵՍ ՀՐԶԱԿԱՅ
ՈՂԲԵՐԳԱԿ ՈՂՈՐՍԵԼԻ ՈՍՏԻԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ ՈՐՍԱՇՈՒՆ ՈՐՍԿԱՆ ՈՒԺՄԱՆԿ ՈՒՂՂԱԿԻ ՈՒՈՆ
ՊԱՏԻՒ ՊԼԼԵԼ ՊՊԻ
ՍԵՂՄԵԼ ՍԻՆԼՔՈՐ ՍԿԶԳԱԿ ՍԿԶԲԱՏԱՐ ՍՈՅՐ ՍՈՍԿԱԼ ՍՐԱՅ ՍՔԵՄԱԾՈՂ
ՏԱԼԻՔ ՏԱՐՄ ՏԱՐՐ ՏԱՐՐԱԿԱՆ ՏԵՆԳ ՏԻՏԱՆ
ՅՐԶԱԳԻԾ ՀՐԶԱԶԳԵՍ ՀՐԶԱԿԱՅ
ՈՂԲԵՐԳԱԿ ՈՂՈՐՍԵԼԻ ՈՍՏԻԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ ՈՐՍԱՇՈՒՆ ՈՐՍԿԱՆ ՈՒԺՄԱՆԿ ՈՒՂՂԱԿԻ ՈՒՈՆ
ՊԱՏԻՒ ՊԼԼԵԼ ՊՊԻ
ՍԵՂՄԵԼ ՍԻՆԼՔՈՐ ՍԿԶԳԱԿ ՍԿԶԲԱՏԱՐ ՍՈՅՐ ՍՈՍԿԱԼ ՍՐԱՅ ՍՔԵՄԱԾՈՂ
ՏԱԼԻՔ ՏԱՐՄ ՏԱՐՐ ՏԱՐՐԱԿԱՆ ՏԵՆԳ ՏԻՏԱՆ

- ՀՐԶԱԳԻԾ ՀՐԶԱԶԳԵՍ ՀՐԶԱԿԱՅ
ՈՂԲԵՐԳԱԿ ՈՂՈՐՍԵԼԻ ՈՍՏԻԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ ՈՐՍԱՇՈՒՆ ՈՐՍԿԱՆ ՈՒԺՄԱՆԿ ՈՒՂՂԱԿԻ ՈՒՈՆ
ՊԱՏԻՒ ՊԼԼԵԼ ՊՊԻ
ՍԵՂՄԵԼ ՍԻՆԼՔՈՐ ՍԿԶԳԱԿ ՍԿԶԲԱՏԱՐ ՍՈՅՐ ՍՈՍԿԱԼ ՍՐԱՅ ՍՔԵՄԱԾՈՂ
ՏԱԼԻՔ ՏԱՐՄ ՏԱՐՐ ՏԱՐՐԱԿԱՆ ՏԵՆԳ ՏԻՏԱՆ

ՊԱՇՏՊԱՆՔ ԲԱՌ-85

Large grid for crossword puzzle 85. The grid contains black squares indicating where letters should not be placed.

- ԱԳԱՐԱԿԱՊԱՆ ԱԼԵԱԿ ԱՂՈՒՆ ԱՄԱՌ ԱՆԿԱՐ ԱՆՈՒՐԶ ԱՌԱԶ ԱՐԳԱՆԱԿ ԱԲԱՏԱԿԱՆ
ԲԱԼԻՇ ԲԱՆԱԿ ԲԱՍՐԱՆՔ ԲԱՐՏԻ ԲԵՐՂԱԿԱԼ
ԸՆԹԱՑԻԿ ԸՆԾԱՅ ԸՆԿԵՐ ԸՆԿԵՑԻԿ ԸՆՏԱՆԵՆԱԼ ԸՆՏԻՐ
ԼՈՒՍԱՇԱԻԴ ԼՐԶՍՏՈՒԹԻՒՆ
ԿԱՍՐԶԱԿԱԼ ԿԱՅՐՈՒԳԻ ԿԱՐԱՍ ԿԵՂՏՈՏ ԿԿՈՒ ԿՇԻՈ ԿՈՒՏԱԿՈՒՄ ԿՈՒՄԶԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ
ՀԱԿԱԳԻՐ ՀԱԿԱՆԻՇ ՀԱՍՐԵԼ
ՅԱՆՂԱՐՏ ՀՐԱՏԱՊ
ՍԱՄԻԿ ՍԱՅՐԻ ՍԱՐՄԱՆԴ
ՅԱՐԿ ՅՈՅՐ ՅՈԿԱՏԱԿ ՅՈՏՆԿԱՅՍ
ՇԱՂԿԱՊ ՇԱՆԹԱՐԳԵԼ ՇԵՇՏԱԿԻ ՇԻԿԱՍՈՐԹ

ԽԱԶԲԱՌ-ԹԻԻ 82-ԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

10x10 grid for crossword puzzle 82. The grid contains black squares indicating where letters should not be placed.

ԽԱՂԻՆ ՕՐԵՆՔԸ.
- Բառերը կրնան կարդացուիլ տարբեր ուղղութեամբ՝ հորիզոնական, ուղղահայեաց եւ շեղակի:
- Միեւնոյն տառը կրնայ գործածուիլ մէկէ աւելի բառերու մէջ:
- Դիւրութեան համար սկսիլ երկար բառերը գտնելով:
Պահուած բառը (6 տառով)՝ ԵՂՁԵՐՈՒԻ ՏԵՍԱԿ

ՊԱՇՏՊԱՆՔ ԲԱՌ-ԹԻԻ 84-ԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ՝ ՀԱԴԱՂԱԿ
Պահուած բառին եւ խաչբառին պատասխանները տեսնել խաղերու յաջորդ թիւով

# ԶՄՄԱՌՈՒ ՈՒԽՏԻ ՕՐ

Կիրակի, 31 Մայիս 2026-ի առաւօտեան ժամը 10-ին, 2մմառու Ս. Աստուածածնայ Մայրավանքի մայր մուտքին տեղադրուած՝ Ս. Գեորգի սրբապատկերին մօտ համախմբուած, Լիբանանի հայ կաթողիկէ Կղերաց դասը, մշակութային, հայրենակցական, բարեսիրական, կրթական եւ այլ կառոյցներու ներկայացուցիչներն ու ուխտաւորներու հոծ բազմութիւնը վարդարանի ջերմեանտոյններէ մտնելու համար ընթացան դէպի Ս. Իգնատիոս Մալոյեանի նուիրուած ամփոթարան:

Ժամը 10:30-ին, մայրավանքի վեհարանէն փառաշուք թափօրը՝ աղօթքներու մրմունջով եւ անուշաբոյր խունկերու ծխանկով, ուղղուեցաւ դէպի ամփոթարան, ուր ընթացք առաւ Ս. եւ անմահ Պատարագը, զոր մատոյց 2մմառու Պատրիարքական Կղերի միաբանութեան պատրիարքական փոխանորդ եւ 2մմառու վանքի Մեծաւոր՝ Գերգծ. Մաշտոց թ.ծ.վ. Զահրէեան: Աղընթերակայութեամբ գեր. Զ. Տիգրան վրդ. Փիլիպոսեանի եւ գեր. Զ. Վարդան վրդ. Ճալուլֆի: Խորանիկ սպասաւորեցին Ս. Իգնատիոս Մալոյեան դպրեւանքի ժառանգաւորներն ու Ս. Միքայէլ ընծայարանի նորընծաները: Ս. Փրկիչ ժողովրդապետութեան «Արծիւեան» երգչախումբը, ղեկավարութեամբ պրն. Նշան Մարաշլեանի, կատարեց պատարագի երգեցողութիւնը:



Յընթացք պատարագին, ձեռամբ վանահօր, տեղի ունեցաւ սքեմներու օրհնութիւն, տուչութիւն եւ Միաբանութեան անդամակցութեան խոստումի արարողութիւն: Երկու ժառանգաւորներ՝ Յարութիւն Պերպերեան եւ Պերո Շմբէան ստացան սքեմ կրելու իրաւունք: Անոնց միացաւ ժառանգաւոր Սեպուհ Մարաշլեանը, ուստի երեք ժառանգաւորները միասնաբար կատարեցին 2մմառու Պատրիարքական Կղերի միաբանութեան անդամակցութեան խոստումը:

Յաւուր պատշաճի խօսքին մէջ Մեծաւոր հայրը անդրադարձաւ օրուայ խորհուրդին, ուխտագնացութեան իմաստով՝ 2մմառու Տիրամօր հովանիին տակ հայ ազգի գաւազններու գոյատեւումին, անոր բազում շնորհած բարիքներուն եւ կատարած բարեխօսութիւններուն:



Իսկ ժառանգաւորներուն մաղթեց հաստատ ընթացք քահանայական սուրբ կոչման ճանապարհին մէջ: Ան անդրադարձաւ Ս. Իգնատիոս Մալոյեանի խօսքին եւ 2մմառեան Միաբան հայրերու կատարած աշխարհասփիւռ առաքելութեան: «Պիտի կրկնեմ եւ յեղեղեմ՝ որքան որ Յրեշտակաց փողերը Աստուածածնայ փողոյն 2մմառու գագաթը հնչեն եւ անտարանէն՝ խնդրելով եռանդազին այս Սուրբ մօրմէն, որ իւր փողոյն փողահարներու շունչը սաստկացնէ, կործեքրին զօրացնէ եւ իմաստուն եւ աստուածարեալ միաբաններուն ոյժ, զօրութիւն եւ կարողութիւն պարգեւէ, որպէսզի սա փողերի փողահար գունդին վրայ ստուգուի այդ մարգարէութիւնը «Շնորհ ամենայն երկիր եւ բարբառ լոցա եւ մինչեւ ի ծագ աշխարհի եւ խօսք լոցա, երկինք պատմեն գիշառ Աստուծոյ եւ գործ ձեռաց լոցա պատմէ՝ 2մմառեան միաբանութիւն»»:

Մեծաւոր հայրը յատուկ անդրադարձաւ նաեւ ազգային առումով Մայիս ամսուայ խորհրդանշական իմաստին թէ՛ «Մայիսը, մեր ժողովուրդին աննկուն կամքին, յաղթանակած ոգիին եւ վերապրելու հրաշագործ կարողութեան կենդանի վկայութիւնն է: Անկա հաւատքի, քաջութեան, ազգային գիտակցութեան եւ միասնական կամքով անկախ պետականութիւն կերտելու խորհրդանշանն է»:

Ապա եզրափակեց. «2մմառու Յաւագին Տիրամօր հրաշագործ պատկերին առջեւ խոնարհած, երախտագետ մնալով անոր ունեցած անճամբի միջամտութիւններուն, վերագտնելը մեր հաւատքի ուղին, մեր յոյսը՝ միասնականութեան մէջ եւ համերաշխ եղբայրասիրութիւնը Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի թափած արեան սիրոյ խորհուրդին մէջ»:

Հոգեպարար արարողութենէն ետք, մայրավանքի դահլիճին մէջ Մեծաւոր հայրը, վարչական հայրերն ու Միաբանութեան անդամակցած ժառանգաւորները ընդունեցին ներկաներուն շնորհաւորութիւնները, ապա Դպրեւանքի սեղանատան մէջ տեղի ունեցաւ հացկերոյթ:

Ուխտագնացութիւնը իր լրումին հասաւ յետմիջօրէի ժամը 3-ին, մայրավանքի «Փոխման Ս. Կուսին» մայր եկեղեցու մէջ վարդարանի ջերմեանտոյնի աղօթքով:

ARARAD DAILY NEWSPAPER
Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradoratert@gmail.com
ارارات جريدة يومية أرمنية
تصدر عن مركز ماسيس للملحة والنشر (ش.م.م.)

# ՎԱՍՏԱԿԱԿՈՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՄԵԾԱՐԱՆՔԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Կիրակի, 24 Մայիս 2026-ի երեկոյեան ժամը 6-ին, տեղի ունեցաւ վաստակաւոր ուսուցիչներու մեծարանքի հանդիսութիւն մը, որու ընթացքին ՄԱՅՄԵՄ-ի Կրթական խորհուրդին կազմակերպութեամբ, եւ անոր Կեդրոնական մարմինին հովանաւորութեամբ, շքարուեցան 12 ուսուցիչ-ուսուցչուհիներ, որոնք 25 եւ անէն տարիներէ ի վեր որպէս կրթական մշակներ կը գործեն, գլխաւորաբար մեր վարժարաններուն մէջ: Այսպէս՝ մեծարուեցան հետեւեալ կրթական մշակները. - Զայ Աւետ. զուլեմէ՝ տիկ. Թալին Չուլաքեան, տիկ. Մարիա Ռահպանի, տիկ. Ռօզ Պշարա, օրդ. Վարդուկ Ֆնզլեան եւ տիկ. Տունիա Նէայմէ: ԶԱ Կեդրոնական Բարձրագոյն վարժարանէն՝ տիկ. Մարալ Տէյիբմեհման եւ տիկ. Մարալ Զայտոսեան: ԶԱ Շամլեան Թաթիկեան վարժարանէն՝ տիկ. Զեփիւռ Բեշիշեան, իսկ Այնճարի ԶԱ վարժարանէն՝ տիկ. Արփա Աստուեան, տիկ. Մանուշակ Գազանճեան, տիկ. Ռանիա Պերպերի եւ տիկ. Ֆելզ Ալգատի:



Յայտագիրը սկսաւ Աստուածաշունչի ընթերցումով եւ աղօթքով, զոր մատոյց վեր. Ռաֆֆի Մաքրլեան, Զովի Նոր Մարաշի Զայ Աւետ. եկեղեցիին:

Հանդիսութեան ընթացքին ելոյթ ունեցան Կրթական խորհուրդի ատենապետուհի դոկտ. Արտա Էքմէճի՝ բացման խօսքով, ապա՝ Երիտասարդութեան մարմնակրթութեան նախարար դոկտ. Նորա Պայրազարեան, որ յաւուր պատշաճի իր սրտի խօսքին մէջ շեշտեց դպրոցին դերակատարութիւնը մանաւա՛ղ լիբանանեան բազմաժանտակ տաղանակներու այս օրերուն: Ան վեր առաւ ուսուցիչին եական դերը, թէ մերօրեայ արագաձագ փոփոխութիւնները հարկ է որ յաջորդ սերունդին ապահովէ ո՛չ միայն գիտութիւն, այլեւ ապագայի հանդէպ յոյս ու մարդկային արժեքներու հանդէպ հաւատք:

Նուազով հանդէս եկան Զայ Աւետ. զուլեմէ աշակերտներ, զուգերգով՝ Զայ Աւետ. Կեդրոնական Բարձրագոյն վարժարանէն, ասմունքով՝ Այնճարի Զայ Աւետ. վարժարանէն: Պարգեատրուող ուսուցիչները իրենց շքանշանները ստացան ՄԱՅՄԵՄ-ի նախագահի տեղապահ վեր. դոկտ. Փոլ Զայտոսեանէն: Ապա, շքարուող մշակներուն կողմէ հայերէնով խօսք առաւ տիկ. Զեփիւռ Բեշիշեան, իսկ արաբերէնով՝ Տիգր Ֆելզ Ալգատի:

ՄԱՅՄԵՄ-ի խօսքը արտասանեց վեր. դոկտ. Փոլ Զայտոսեան, որ նշեց թէ 180 տարիներ առաջ իսկ, իր հիմնադրութեան առաջին օրերէն, Զայց. Աւետարանական



Եկեղեցիին համար կրթական հաստատութիւնն ու դաստիարակները եղած են անհրաժեշտ սիւներ՝ Եապէս սատարելով Աւետարանը քարոզողներուն առաքելութեան: Ան նաեւ հաստատեց, որ աշխարհի բարոյութիւնն ու կրթական համակարգը առանց Աստուծոյ սիրոյն կը կորսնցնեն իրենց վստահելիութիւնը: Ապա ան տուաւ իր առաքելական օրհնութիւնը, որմէ ետք բակին մէջ տեղի ունեցաւ կարկանդակի հատում եւ հիւրասիրութիւն:

Տեղին է նշել, որ վաստակաւոր ուսուցիչներու հրապարակային պարգեատրումը նոր չէ ՄԱՅՄԵՄ-ի համար. այն հիմնուած է Դուկասու 10.7-րդ համարին վրայ որ կ'ըսէ՝ «Մշակը արժանի է իր վարձուրդին»: Ան այդ, 1970-էն ի վեր, քանի մը տարին անգամ մը տեղի կ'ունենան նման հանդիսութիւններ, եւ 2026-ի հանդիսութիւնը 13-րդն է այդ շարքին: Յարդ պարգեատրուած են (2026-ը ներառեալ) 163 կրթական մշակներ:

ԱՌՈՂԱՄԱՐԱԿԱՆ ԲԱՏԱՌԻՎ ԱՌԱՋԱՐԿ՝ ԱՅՅՄ ԿՐԻՄԵ ՕԳՏՈՒՄԻ ՏԱՐԱՆՈՒՑՄԱՆ ԲՆԻՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԵՍ ԳԻՆՈՎ: ՍՄԱՏԷՔ 50% ԶԵՐՉ՝ ԱՌՈՂԱՄԱՐԱԿԱՆ ԿԱՐԵՈՐ ԾԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ:
Առաւելութիւններ
• Կես Գին, 50% զեղ՝ արեան բոլոր քննութիւններուն համար:
• Մատչելի ծառայութեան նկատ. 25% զեղ՝ ճառագայթային նկատի (X-ray) բոլոր ծառայութիւններուն համար:
• Բարձր Որակ, Կատարելի քննութիւններ՝ «Սէն Մարք» (St. Marc) տարրալաւորաններուն մէջ:
Ինչպէ՞ս Օգտուիլ
• Այցեկեցե՛ք ՀԿԲՄ-ի դարձմանատունը:
• Խնդրեցե՛ք ձեր բժշկական ուղեգիրը:
• Ներկայացուցե՛ք ձեր ՀԿԲՄ-ի ուղեգիրը «Սէն Մարք» տարրալաւորան:
• Ստացե՛ք 50% զեղը անմիջապէս:
Առաջնահերթութիւն տուէ՛ք ձեր առողջութեան այսօր: Այս բացառիկ առաւելութիւնը հիմա գործող է:

# ՄԱՅՐԵՐՈՒ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Զայ մայրը տարբեր է միւս ազգերու մայրերէն թէ՛ խառնուածքով եւ թէ՛ ներշնչումով, արդարեւ, կնոջական շարժումի այսօրուան չափանիշերով բացառիկ գիտ մըն է աշխարհի վրայ հայ մայրը: Բոլորս ալ տարուան 12 ամիսներուն ընթացքին զանազան առիթներով կը յիշեց մեր մայրերը: Անոնց գուրգուրանքն ու հոգատարութիւնը անսահման է: Երբ կը խօսիք մայրերու մասին, քիչ թէ շատ գրականութեան սիրահար ռեւ մէկը չի կրնար չիշել Պարոյր Սեւակի Նշանաւոր «Մօր Ձեռքերը» բանաստեղծութիւնը: Չեմ կարծեր, որ ուրիշ ազգերու մէջ բանաստեղծներ այսքան շատ բան գրած ըլլան իրենց մայրերուն կամ ընդհանրապէս մայրական սիրոյ մասին:

Ս.Դ.Յ.Կ. Տիգրուհի Ուսանողական Երիտասարդական Միութեան Երիտասարդական դիւանը, Զինգաբթի, 21 Մայիս 2026-ի երեկոյեան ժամը 6:30-ին, Ումէյլի Ս. Յարութիւն եկեղեցու «Յովհաննէս եւ Վարդուհի Պաշտօն» սրահին մէջ իւրայատուկ կերպով նշեց Մայրերու տօնը:

Սոյն տօնախմբութեան ներկայ էին կուսակցութեանս հովանաւորութիւնը վայելող միութիւններու եւ մասնաճիւղերու ազնուափայլ ներկայացուցիչ կանայք եւ ծնողներ:

Լիբանանի, Զայաստանի եւ Ս.Դ.Յ.Կ.-ի քայլերգներու յոտնկայս ունկնդրութեան ետք, օրուան հանդիսավարը բարի գալուստ մաղթեց ներկայ մայրերուն, բարձր որակեց հայ մօր տիպարը ունեցող պատուական մեր մայրերուն անձնագոհողութիւնը եւ նուիրումը մեզի հանդէպ, ապա հրաւիրեց ընկերուհի Մեղրի Պարախեանը՝ փոխանցելու Ս.Դ.Յ.Կ.-Տ.Ո.Ե.Մ.-ի խօսքը:

Ընկերուհի Պարախեան նախ շնորհակալութիւն յայտնեց ներկայ բոլոր մայրերուն, որոնք ընդառաջած էին «Մայրերու Օր»ուան այս միջոցառման հրաւերին եւ իրենց ներկայութեամբ անգամի մը համար եւս պատուած էին մեր մայրերը: Ան ըսաւ. «Կողջունե՛ք ձեզ, հայ մայրեր, անաղութիւն դարձած այս ձեռնարկը 365 օրերէն մէկ օրը մայրերու նուիրելը նուազագոյն մեր պարտքն է: Մեր ողջ պատմութեան ընթացքին հայ մայրը հայ ժողովուրդին համար ո՛չ միայն դարձած է տիպար մայր՝ իր կեանքին մէջ ցոլացնելով հոգեւոր, բարոյական ու ազգային սրբազան արժեքներն ու առաջնութիւնները, ո՛չ միայն ան ընտանիքին ամրակում սիւնն է եղած ու իր գաւազններուն նուիրեալ դաստիարակը, այլեւ մեր պատմութեան ամենէն ճակատագրական պահերուն իր օրհնակելի վարքագծով, ամուր կեցուածքով, անհուն գոհողութեամբ, քրիստոնէական հաւատքի պահպանութեան, ինչպէս նաեւ ազգաշինութեան ու հայրենաշինութեան սրբազան առաքելութեան բերած է ամբողջանուէր ու յանձնառու մասնակցութիւն, եւ եղած է բարձրագոյն աստիճանի յարգանքի արժանի անձը:



Իր խօսքի աւարտին, ընկերուհի Պարախեան անգամ մը եւս շնորհաւորեց աշխարհասփիւռ հայ մայրերը եւ յատկապէս ինչպէսեւ մայրերը, որոնք ամէն ջանք թափեցին եւ ցուցաբերեցին հայ մօր տիպարը, որոնք իբրեւ հերոսներ մնացին կառնած իրենց ընտանիքին:

Երիտասարդական դիւանի անդամները պատրաստած էին կրկնիկ գեղարուեստական յայտագիր մը, որ սկիզբ առաւ հայկական պարով՝ Փաթիլ Փափագեանի կատարողութեամբ, որուն յաջորդեց Բեւիլ Ապտըլնուրի պատրաստած ճոխ երգացանկը երգեհոնի վրայ:

Զանճելի եր դիտել տեսերիզի վրայ պատրաստուած իւրաքանչիւր անդամի սրտի խօսքը՝ ուղղուած իրենց մայրերուն: Խումբ մը տիպարականներ պատրաստած էին թատրոն մը, որուն միտքը հայ մօր գոհողութիւնը կը ներկայացնէր, եւ աւարտին իւրաքանչիւրը իր մօր նուիրեց ծաղիկ մը:



Փակման խօսքով, հանդիսավարուհին վարչութեան անունով շնորհակալութիւն յայտնեց բոլոր այն հաստատութիւններուն, որոնք սատար հանդիսացան սոյն ձեռնարկի յաջողութեան, ինչպէս նաեւ այն ընկերներուն եւ ընկերուհիներուն, որոնք ոչ մէկ ճիգ չխնայեցին այս միջոցառումը յաջողութեամբ պատկերու համար: Ապա ան հրաւիրեց բոլորը կրկնիկ հիւրասիրութեան:

Ներկաները սրահէն բաժնուեցան ուրախ մթնոլորտի մէջ, նորանոր յաջողութիւններ եւ յարատեւ վերելք մաղթելով Ս.Դ.Յ.Կ. Տիգրուհի Ուսանողական Երիտասարդական Միութեան աշխոյժ գործունէութեան, գարուբէն ներս իրենց ունեցած ազգանուէր եւ գաղափարանուէր դերակատարութեան: